ՀՏԴ 721. 001 ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎՐԱ

Շահանե Գարեգինի Փարսյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք.Երևան, ՀՀ
shah-parsian@yandex.ru

Սյունիքի մարզի համայնքների խոշորացման արդյունքում ներառված բնակավայրերի գործառույթները և գործառական ուղղվածությունն անմիջական կապի մեջ են բնակչության թվի հետ, որը բնակավայրի տարածքի և իր տարածքում գտնվող բոլոր տեսակի կառուցապատման ծավալների կանխորոշման հիմնական ցուցանիշն է: Բնակավայրերի տեղադիրքի և բնակչության թվաքանակի կապը թույլ կտա կառուցողական ճշգրտումներ կատարել խոշորացված համայնքների բնակավայրերի ճարտարապետահատակագծային կազմակերպման կառուցվածքում:

Առանցքային բառեր. *խոշորացված համայնք, բնակչության թվաքանակ, բնակավայրի տեղադիրք, քաղաքաշինական-տնտեսական գործոն, էկոլոգիական գործոն, հատակագծային կառուցվածք*

Ներածություն

Տարածքային կազմակերպման առումով այնպիսի կարևոր ցուցանիշներ, ինչպիսիք են՝ բնակավայրերի միջին մարդաշատությունը, դրանց քանակն ըստ բնակչության թվի, ինչպես նաև բնակչության խտությունը Սյունիքի մարզում, հատկապես գյուղական բնակավայրերում, անհամեմատ բարձր խոցելիություն ունեն [1]:

Խոշորացված համայնքներում տարածական կայուն միջավայր ստեղծելու համար պետք է հատուկ ուշադրություն դարձնել բնակավայրերի գրաված դիրքին և դերին, բնակչության աճի դինամիկային, տարածքային և բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետությանը, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների զարգացման հնարավորություններին: Խոշորացված համայնքներում կայուն զարգացման դրույթների ներդրումը քաղաքաշինական պլանավորման մեջ ենթադրում է տարածական կայուն միջավայրի կազմակերպման նոր սկզբունքներ, ինչպիսիք են.

- հավասարակշռություն կառուցապատման և բնության պահպանության միջև,
- տարածքների տնտեսող կառավարում,
- սոցիալական համերաշխություն ու գործառույթների բազմազանություն [2]:

Վերջիններիս տեղայնացման համար անհրաժեշտ է հաշվի առնել քաղաքաշինական գործունեության վրա ազդող աշխարհագրական, ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական և էկոլոգիական գործոններին ներկայացվող արդի պահանջները:

Ըստ [3]-ի, բնակավայրերի կենտրոնական վայրերից ապրանքների յուրացման և ծառայությունների մատուցման ինտենսիվությունն ուղիղ համեմատական է վերջինից ունեցած հեռավորությանը: Տրանսպորտային ծախսերի մեծացմանը զուգընթաց ծայրամասային հատվածներում ապրանքների եւ ծառայությունների գները բարձրանում են, իսկ պահանջարկը նվազում, ինչը հանգեցնում է դեպի կենտրոնական վայր մարդկանց հոսքի նվազեցմանը: Դա բերում է նոր տնտեսական կենտրոնների և կապերի ստեղծմանը, որոնք իրենց վրա են վերցնում կենտրոնական վայրի անբարենպաստ հասանելիության տիրույթում գտնվող ծայրամասային հատվածներին մատուցվող ծառայությունները [3]:

Իրավիճակի նկարագրությունը: Խոշորացված համայնքների կենտրոնական բնակավայրերն իրենց վրա են վերցրել տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների ու ծառայությունների ողջ ցանկը՝ առավել լայն շրջանակի ծառայություններ մատուցելու նպատակով: Դա ենթադրում է բնակչության որոշակի ներհոսք կենտրոնական բնակավայր, որն իր ազդեցությունն է ունենում առաջին հերթին վարչահասարակական միջուկի ճարտարապետահատակագծային կառուցվածքի վրա, քանզի պատմականորեն այնտեղ են տեղակայվել հասարակական և առևտրի սպասարկման հիմնական օբյեկտները: Ձևավորված միջուկը կազմով, բովանդակությամբ և չափերով նախատեսված է նախկին կարգավիճակին (համայնք) բավարարելու համար: Հետևաբար բնակչության ներհոսքը կենտրոնական բնակավայր պետք է գնահատվի՝

- ըստ մատչելիության,
- ըստ ժամանակավոր բնակչության (ըստ ժամանակաշրջանի):

Թեև Սյունիքի մարզի խոշորացված համայնքների կենտրոնները չեն զիջում հանրապետության այլ մարզերի կենտրոններին բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ապրանքաշրջանառության ծավալով, կենցաղային ծառայությունների և սոցիալական կառուցվածքի այլ տեսակների զարգացման մակարդակով, սակայն տարաբնակեցման առանձնահատկությունները (փոքր գյուղերի գերակշռությունը, տարաբնակեցման խմբային ձևերի թույլ զարգացումը, տեղական նշանակության տրանսպորտային թույլ կապերը) թույլ չեն տալիս լեռնային գյուղերի զգալի մասին օգտվել խոշորացված համայնքների կենտրոնների սոցիալ-մշակութային պոտենցիալից:



Նկ. 1. Խոշորացված համայնքի կենտրոնական բնակավայրի հասանելիության շառավիղները

Հարկ է նկատի ունենալ, որ ժամանակի հետ փոխվել են նաև հասանելության բարենպաստության

աստիճանը բնորոշող ցուցանիշները: Տարածության չափման միավորին փոխարինել է այդ տարածությունն անցնելու համար պահանջվող ժամանակը: Ավելին, եթե նախկինում որպես բարենպաստ հասանելության ցուցանիշ էր դիտարկվում 30…40 *րոպեն*, ապա ներկայումս այդ ցուցանիշն արդեն հավասարեցվել է մինչև 15 *րոպեի* (նկ.1): Հաշվի առնելով վերը շարադրվածը, ուսումնասիրվել է ՀՀ Սյունիքի մարզի խոշորացված համայնքների բնակավայրերի հասանելիության ցուցանիշները տեղային կենտրոններից: Դեպի խոշորացված համայնքի կենտրոն բարենպաստ հասանելիություն է ընդունվել մինչև 15 *րոպե*, սահմանափակ-բարենպաստ՝ 15…30 *րոպե* ժամանակը և անբարենպաստ՝ 30 *րոպեից* ավելին [1]:

Նկ. 2-ից երևում է հասանելիության բավարար ցուցանիշներ ունեն Գորայք և Գորիս խոշորացված համայնքները, մասամբ նաև Տեղ խոշորացված համանքը, սահմանափակ-բարենպաստ հասանելիություն ունի Մեղրի համայնքը, իսկ անբարենպաստ՝ Կապան համայնքը (50%-ից ավել), մասամբ էլ Սիսիան և Քաջարան համայնքները: Ընդ որում, Կապանից անբարենպաստ հասանելիության սահմաններում գտնվող բնակավայրերի 24%-ը շատ մանր գյուղեր են, իսկ 77%-ը մանր գյուղեր՝ մինչև 500 բնակչով:



Նկ. 2. ՀՀ Սյունիքի մարզի խոշորացված համայնքների բնակավայրերի հասանելիության ցուցանիշները տեղային կենտրոններից

Ըստ վերոնշյալ ուսումնասիրությունների, խոշորացված համայնքների կենտրոնական բնակավայրերի ճարտարապետահատակագծային կառուցվածքի փոփոխությունները պետք է հիմնված լինեն այդ բնակավայրերից մինչև 30 *րոպե* հասանելիության ապահովմամբ՝ նոր ենթակենտրոնների ստեղծմամբ: Խոշորացման արդյունքում հնարավոր է առաջանա նոր յուրացվող տարածքների անհրաժեշտություն, որը կարող է հանգեցնել գյուղատնտեսական արժեքավոր հողերի հակադրված ներառումը քաղաքաշինական նպատակներով, որոնց ուրբանիզացումը կհանգեցնի բնապահպանական մի շարք խնդիրների: Մասնավորապես, բնապահպանական միջանցքների ընդհատումը բերում է էկոհամակարգի հավասարակշռության խախտմանը [4, 5]:

Բացի այդ, հարկ է նշել մարզի առկա բնապահպանական խնդիրները, հատկապես հանքարդյունաբերական ձեռնարկությունների արտանետումներից Կապան, Քաջարան և Ագարակ քաղաքների և դրանց շրջակա բնակավայրերի էկոլոգիական խախտումները: Շրջակա միջավայրին զգալի վնաս է հասցնում նաև քաղաքներում առկա ինժեներական ենթակառուցվածքների տեխնիկական վատ վիճակը [6]: Խոշորացման արդյունքում ռեսուրսների համատեղ օգտագործման հետևանքով մարզի էկոլոգիական վիճակը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ:

Հանրագումարի բերելով կատարված վերլուծության արդյունքները, ստորև ներկայացված են համայնքների խոշորացման արդյունքում առաջացած հիմնախնդիրները.

- տեղադիրքով պայմանավորված՝ հանրային ծառայությունների մատչելիության ապահովում,
- կենտրոնական բնակավայրերի վարչահասարակական միջուկի ճարտարապետահատակագծային կառուցվածքի փոփոխություն,
- արժեքավոր հողերի ուրբանիզացման վտանգ:

Վերը նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է կազմել համայնքների հեռանկարային տնտեսական և տարածքային զարգացման ուղղությունների հանձնարարականներ, որոնք անհրաժեշտ է իրականացնել.

- **քաղաքաշինական միջավայրի բարելավմամբ** (հանրային տարածքների և ենթակառուցվածքների զարգացում ու բարեկարգում),
- **բնապահպանական լայն համալիրի կիրառմամբ** (բնապահպանական վտանգ ներկայացնող տարածքների էկոլոգիական վերակառուցում),
- **տարածքների հեռանկարային օգտագործման և կառուցապատման պարտադիր պահանջների սահմանմամբ**:

Հեռահար նպատակը՝ տարածքային համաչափ զարգացում, կայուն քաղաքաշինական միջավայրի արդիականացում:

Նպատակին հասնելու ուղիները հետևյալն են:

- Խոշորացված համայնքներում հանրային ծառայությունների մատչելիությունն անհրաժեշտ է ապահովել, այսպես կոչված, ենթակենտրոնների ստեղծմամբ: Դա ենթադրում է խոշորացված համայնքներում առավել նպատակային դիտարկվող վարչական գործառույթների տեղաբաշխումը կենտրոնական բնակավայրերի բարելավված հատակագծային կառուցվածքում, իսկ հարակից գործառույթները՝ տվյալ պոտենցիալով օժտված համայնքներում՝ արդյունավետ ֆունկցիոնալ-հատակագծային կապերի ապահովմամբ:
- Բնակավայրերի տարածքային սահմանափակման և արժեքավոր լանդշաֆտների ուրբանիզացման գործընթացի կասեցման համար անհրաժեշտ է օգտագործել բնակավայրերի ներքին տարածքային ռեսուրսները (պահուստները)՝ տարածքների վերաօգտագործման կամ հողի երկրորդային շուկայի ձևավորման հաշվին:

- Խոշորացված համայնքներում էկոլոգիական համակարգի հավասարակշռության համար անհրաժեշտ է ձևավորել փոխկապակցված բնապահպանական միջանցքներ: Առաջանում է նոր ռեկրեացիոն գոտիների ձևավորման անհրաժեշտություն՝ ռեկրեացիոն ռեսուրսների միասնական ռացիոնալ օգտագործմամբ:

ФАКТОРЫ, ВЛИЯЮЩИЕ НА ДЕМОГРАФИЧЕСКИЕ ДАННЫЕ И СТРУКТУРУ ГОРОДСКОЙ СРЕДЫ В УКРУПНЕННЫХ МУНИЦИПАЛИТЕТАХ СЮНИКСКОЙ ОБЛАСТИ

Шагане Гарегиновна Парсян

Национальный университет архитектуры и строительства Армении, г.Ереван, РА
shah-parsian@yandex.ru

Функции и осуществляемые виды деятельности в поселениях, включенных в результате укрупнения муниципалитетов Сюникской области, имеют прямую связь с численностью населения - основным показателем, определяющим размеры поселений и объемы всех видов строительства на его территории. Исследование связи между расположением поселения и численностью населения позволит внести конструктивные коррективы в структуру организации архитектурно-планировочных схем поселений в укрупненных муниципалитетах.

Ключевые слова: *укрупненный муниципалитет, численность населения, расположение поселения, градостроительно-экономический фактор, экологический фактор, планировочая структура*

THE INFLUENCE OF THE EXPANSION OF COMMUNITIES OF SYUNIK PROVINCE ON DEMOGRAPHICS AND THE STRUCTURE OF URBAN ENVIRONMENT

Shahane Parsyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
shah-parsian@yandex.ru

The functions of the settlements and operational orientation included as a result of the magnification of communities in Syunik province have a direct connection with the number of the population, which is considered to be the main indicator of the predetermination of all types of building capacity in the area of the settlement and in its area. The link between the location of the settlement and the number of the population will allow do constructive adjustments in the structure of the organization of architectural schemes of the settlements in expansion communities.

Keywords: *communities' unification, number of population, settlement location, urban planning-economic factor, ecological factor, planning structure*

Գրականություն

1. **Թովմասյան Ս.** Հայաստանի Հանրապետությունում տարածական պլանավորման հիմնախնդիրների և դրանց լուծման որոշ մեխանիզմների մասին// ՀՃՄ տեղեկագիր.- 2016. - Հ. 5-6. - էջ 225-226:
2. «ՀԱԲԻՏԱՏ III» ազգային զեկույց // ՀՀ կառավարության 2014թ. Սեպտ. 11-ի նիստի N 38 արձանագրային որոշման հավելված. – Հասանելի. https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/09/38-14.pdf (20.12.2017).

3. **Леш А.** Пространственная организация хозяйства. - М., 2007. - 664 с. – Режим долступа: http://mirknig.su/knigi/estesstv_nauki/48532-prostranstvennaya-organizaciya-hozyaystva.html (12.09.2016).
4. **Jan K. Brueckner.** Urban Sprawl: Diagnosis and Remedies// SAGE Journ. - 2000.-V. 23, Iss. 2. - Available at: http://journals.sagepub.com/doi/abs/10.1177/016001700761012710 (12.09.2016)
5. **Massimo Cecchini, Ilaria Zambon, Antonella Pontrandolfi et al.** Urban sprawl and the 'olive' landscape: sustainable land management for 'crisis' cities// Springer Science+Business Media B.V., part of Springer Nature, 2017.- P. 1–19. - Available at: https://link.springer.com/article/10.1007%2Fs10708-018-9848-5 (accessed 12.10.2016).
6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2014-2017 թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր. - Կապան, 2013. - Հասանելի. http://syunik.mtad.am/development-plan/ (20.12.2017).

References

1. Tovmasyan, S. (2016), "Hayastani Hanrapetutyunum taratsakan planavorman himnahartseri yev drants lutsman vorosh mekhanizmneri masin" [On Spatial Planning Problems in Armenia and Some Mechanisms for Their Solution]. *HHR Newsletter*, vol. 5-6, pp. 225-226 (in Armenian)
2. «HABITAT III» AZGAYIN ZEKUYTS ["HABITAT III" NATIONAL REPORT] *HH karavarutyan 2014. Sept. 11-i nisti N 38 ardzanagrayin voroshman havelvats [Government 2014 Sep 11 Appendix to the Protocol Decision N 38]*. (in Armenian) Available at: https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/09/38-14.pdf. (accessed 12.10.2016).
3. Lesh, A. (2007), *Prostranstvennaya organizatsiya khozyaystva* [Spatial organization of the economy]. Moscow, 664 p. Available at: http://mirknig.su/knigi/estesstv_nauki/48532-prostranstvennaya-organizaciya-hozyaystva.html
4. Jan K. Brueckner (2000), "Urban Sprawl: Diagnosis and Remedies" *SAGE Journ.*, Vol. 23, Iss. 2. Available at: http://journals.sagepub.com/doi/abs/10.1177/016001700761012710 (accessed 12.10.2016).
5. Massimo Cecchini, Ilaria Zambon, Antonella Pontrandolfi et al. (2017), "Urban sprawl and the 'olive' landscape: sustainable land management for 'crisis' cities" *Springer Science+Business Media B.V., part of Springer Nature*, pp.1–19.
6. Socio-Economic Development Program of the Syunik Region of the Republic of Armenia for 2014-2017, Kapan, 2013. (in Armenian) Available at: http://syunik.mtad.am/development-plan/ (accessed 04.05.2016).

Փարսյան Շահանե Գարեգինի *(ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, ՃՏՊԾՎՎԳԱԿՊ ամբիոնի ասպիրանտ, (+374)94150052, shah-parsian@yandex.ru*
Парсян Шагане Гарегиновна *(РА, г.Ереван.) - НУАСА, кафедра ТАРРИАНИИиИ, аспирант, (+374)94150052, shah-parsian@yandex.ru*
Parsyan Shahane *(RA, Yerevan) - NUACA, chair of ATHRRFAH, postgraduate student, (+374)94150052, shah-parsian@yandex.ru*

Ներկայացվել է՝ 24.05.2018թ.
Ընդունվել է տպագրության՝ 04.06.2018թ.